

Միացեք Արխիվներու միջազգային օրուան տոնակատարութեան եւ ներկայացուցեք ձե՛ր արխիւային ծառայութիւնը:

Յունիս 9, 2015-ին ամբողջ աշխարհի արխիւային աշխատողները պիտի միանան իրարու՝ տօնելու համար մեր մասնագիտութեան կարեւորութիւնը եւ նուաճումները: Դրկեցե՛ք մեզի ձեր հաւաքածոներէն վերցուած նմուշ մը, որ ձեր արխիւային ծառայութեան սպասարկած վայրը ի ցոյց կը դնէ: Նկարագրեցե՛ք պատկերը եւ, եթէ կը փափաքիք, աւելցուցե՛ք կարճ մեկնաբանութիւն մը եւ կցեցե՛ք ձեր արխիւի համացանցային հասցէն: Արխիվներու միջազգային խորհուրդի տեղական, քաղաքային եւ տարածքային բաժինը մեր ստացած նկարները եւ հաղորդագրութիւնները ցուցադրելու համար յատուկ կայք մը պատրաստած է:

Եթէ կ'ուզեք տեսնել 2014-ի մեր աշխատանքը, այցելեցեք www.internationalarchivesday.org կայքը: Յուսանք, որ ձեր օգնութեամբ 2015-ինը աւելի ծաւալուն եւ աւելի որակեալ ըլլայ:

Մասնակցելու համար կը խնդրենք որ ձեր ընտրած նիւթին jpeg պատկերը (առաւելագոյնը 800 x 800 px) եւ անոր մասին ձեր իսկ լեզուով գրուած կարճ նկարագրութիւն մը մինչեւ մայիս 30, 2015 դրկեք m.langelaar@rotterdam.nl հասցէին: Եթէ անցեալին արդէն պատկեր մը դրկած էք, 2015-ի համար կրնաք ուրիշ մը աւելցնել: Մեր կայքը պիտի կարենայ յառաջիկայ տարիներուն աւելի մեծ թիւով պատկերները պարփակել:

Միացեք մեզի Facebook-ի վրայ. <https://www.facebook.com/pages/ICA-Section-Local-Municipal-and-Territorial-Archives/183455228363014>

Հետեւեցեք մեր գործունէութեանը @ICArchiv #IAD15

Անհամբեր ենք ձեր գանձերու վայելումին մասնակից դարձնելու ամբողջ աշխարհի մեր պաշտօնակիցները:

Շնորհաւոր Արխիվներու միջազգային օր բոլորիս: